  

Իմ սրտում, Տէր Աստուած իմ,
սէր է բորբոքուել մէկի նկատմամբ,
որին Դու նոյնպէս ճանաչում ես ու սիրում:

Շնորհակալութիւն եմ յայտնում Քեզ այս պարգեւի համար,
որ հոգիս պարուրում է վառ ուրախութեամբ,
ինձ դարձնում է Քո նման, Քո՝ որ Սէրն ես,
եւ ինձ ըմբռնել է տալիս կեանքի արժէքը, որ պարգեւել ես ինձ:

Օգնիր ինձ չվատնել այս անծայրածիր հարստութիւնը,
որով լիացրիր իմ սիրտը.
միշտ յիշեցրու ինձ, որ սէրը պարգեւ է
եւ չի կարող խառնուել եսապաշտութեան հետ.
որ սէրը մաքուր եւ ջինջ է
եւ չի կարող համատեղուել ստորութիւնների հետ.
որ սէրը արգասաւոր է
եւ այսօրուանից իսկ պէտք է մի նոր կեանք արթնացնի
ինձնում եւ ինձ ընտրածի հոգում:

Աղերսում եմ Քեզ նրա համար,
որ սպասում է ինձ եւ իմ մասին մտածում,
որ իմ մէջ է հաստատում իր ամբողջ ապագան:
Մէկս միւսիս արժանի դարձրու:
Պահպանիր մեզ ամուսնութեան, նրա վեհութեանը,
նրա պատասխանատուութիւններին,
որպէսզի մեր հոգիներն ու մեր սրտերը
այժմուանից արդէն միացած շինեն միեւնոյն սիրոյ մէջ:

Ամէն:

    

Մաշտոց Վահէ Ղազարեան
www.mashtoz.org